ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

N 265
20 դեկտեմբեր 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ղեկավարի N36-Ա, N37-Ա , N38-Ա որոշումները:

20/12/2017

X _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան
032268781

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱԽՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և առաջնորդվելով Լեռնապատ համայնքի ավագանու 2017թ.-ի 14 դեկտեմբերի թիվ 49-Ն <<Լեռնապատ համայնքի 2018թ.-ի բյուջեն հաստատելու մասին>> որոշմամբ՝

որոշում եմ.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2018թ.-ի բյուջեն՝ եկամտային և ելքային մասերի բաշխումը ըստ եռամսյակների:

2. Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2018թ.-ի ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի
14
գ.Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 37-Ա

5 ՓՈՂ. 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Սմբատի Թումանյանի դիմումը, ԱՁ «Արտյոմ Սաքանյան»-ի կողմից կատարված տեղանքի չափագրման արդյունքում կազմված հատակագծերը և բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 60 և 64-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնապատ համայնքի 06-041-0135-0005 ծածկագրի տակ գտնվող 0.07532 հա բնակելի կառուցապատման և սպասարկման հողամասը և հողամասում գտնվող ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա չգտնվող, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1969թ.-ից մինչև 2001թ.-ի մայիսի 15-ը կառուցված շինությունների հատակագծով տրված բոլոր շինությունները ճանաչել Արևհատ Ալեքսանի Մարգարյանի(15.09.1928թ.), Արթուր Սմբատի Թումանյանի(13.04.1967թ.), Աիդա Սեյրանի Թումանյանի(09.09.1966թ.), Սմբատ Արթուրի Թումանյանի(15.04.1990թ.) սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից 0.07 հա հատկացված բնակելի կառուցապատման հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցված 0.00532 հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականության իրավունքը:
3. Հաստատել հողամասի սահմանները համաձայն հաստատված հատակագծի:
4. Տնատիրությանը տրամադրել փոստային հասցե՝ գ. Լեռնապատ 5 փող 4 տուն:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

2017թ. դեկտեմբերի 20
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 38-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-041-0135-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դիվաննա, Վարդուհի, Մուրադ Մարգարյանների և Փառանձեմ Հայրապետյանի դիմումը, Արևհատ Մարգարյանի և Արթուր, Աիդա, Սմբատ Թումանյանների դիմումը, ԱՁ «Արտյոմ Սաքանյան»-ի կողմից կատարված տեղանքի չափագրման արդյունքում կազմված հատակագիծը, պարզեցինք, որ Լեռնապատ համայնքի 06-041-0135-0006 ծածկագրով բնակելի կառուցապատման, տնամերձ հողամասը սխալմամբ հաշվառվել է Դիվաննա, Վարդուհի, Մուրադ Մարգարյանների և Փառանձեմ Հայրապետյանի անվամբ, սակայն իրականում այն պատկանում է Արևհատ Մարգարյանին և Արթուր, Աիդա, Սմբատ Թումանյաններին ուստի ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 2-կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 4 կետով, հաշվի առնելով ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. 186-Ն հրամանը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնապատի գյուղապետարանի կողմից 15.01.2002թ. տրված քաղվածքում և 15.05.2003թ. տրված թիվ 1751433 վկայականում ուղղել հողերի քարտեզագրման արդյունքում առաջացած սխալը և Լեռնապատ համայնքի 06-041-0135-0006 ծածկագրով 0.02774 հա բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել Արևհատ Ալեքսանի Մարգարյանի(15.09.1928թ.), Արթուր Սմբատի Թումանյանի(13.04.1967թ.), Աիդա Սեյրանի Թումանյանի(09.09.1966թ.), Սմբատ Արթուրի Թումանյանի(15.04.1990թ.) սեփականության իրավունքը համաձայն 20.12.2017թ. տրված քաղվածքի:
2. Սույն որոշման առաջին կետում նշված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական(կամ հողաշինարարական) նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Հաստատել հողամասի սահմանները համաձայն հաստատված հատակագծի:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համայնքի ղեկավար Ս. Աբազյան

2017թ. դեկտեմբերի 20
գ. Լեռնապատ